

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزتك** جريدة يومية سياسية وأدبية - الديرة السؤولة - إيشا درويشيان

1500 L.Ռ. 749Գ. ՏԱՐԻ, ԹԻԻ 23 (20779) ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 2 ԱՊՐԻԼ, 2001 10 ԷՁ

ՄԻԱՅՆԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԱՐՔԱՆՍՕ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԷՋ ԵՄ ԱՊՐԻԼ 24Ը ԿԸ ՃԱՆՉՑՈՒԻ ԻՐԵՒ ԶԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԻ ՕՐ

Արքանսոյի նահանգապետ Մայք Հաքապի 27 Մարտին հրապարակեց հռչակագիր մը, որ Ապրիլ 24ը կը ճանչնայ իբրև Հայկական Ցեղասպանութեան յիշատակումի օր:

Հռչակագիրը կը ճանչնայ «Օսմանեան թուրքերու կողմէ նուազագոյնը մէկուկէս միլիոն հայերու սպանութիւնը եւ բազմաթիւ ուրիշներու բռնի տեղահանումը»:

Հռչակագիրը նաեւ կը հաստատէ, որ «Հայ ժողովուրդը իրեն կրած վնասներուն համար հատուցում չէ ստացած եւ արդի թուրքիոյ կառավարութիւնը կը վարէ Հայկական Ցեղասպանութեան ուրացման քաղաքականութիւն»:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԲԱՆՈՒՄՆԵՐՈ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԵՅԱՆ ՇԱԲԱԹԱԿԵՐՋԻՆ

Պաղեստինեան շրջաններուն մէջ բախումները շարունակուեցան շաբաթավերջին պաղեստինցիներուն եւ իսրայէլեան ուժերուն միջեւ: Կապալի մէջ վիրաւորներ արձանագրուեցան, իսկ Բեթղեհէմի եւ Երուսաղէմի շրջակայքը աւելի քան 12 միջադէպեր տեղի ունեցան, յայտնեց իսրայէլեան բանակը:

Պաղեստինեան իշխանութեան կառավարութիւնը Շաբաթ օրուան նիստին աւարտին հրապարակեց յայտարարութիւն մը, որ կը նշէր, թէ իսրայէլ «ամբողջութեամբ պատասխանատու է ոճիրներուն, յարձակումներուն ու սպանութեան»:

Յիւստարարութիւնը դատապարտեց նաեւ Միացեալ Նահանգները, որոնք վերջին տարիներէն իսրայէլի ենթակիցներուն դէմ իրականացնող անարդար քաղաքականութեան շրջաններ միջազգային դէտեր ուղարկելու առաջարկը:

Մինչ այդ, հապարաւոր պաղեստինցիներ Շաբաթ օր բողոքի ցուցերու վերածեցին վեց պաղեստինցիներու յուղարկարարութիւնը: Նապոլուսի եւ Ռամալայի մէջ անոնք պահանջեցին վրէժը լուծել վեց պահերուն, որոնք ինկած էին Ուրբաթ օրուան բողոքի ցուցերուն ընթացքին:

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Պե-նիամին Պէն Էլիեզեր իր կարգին յայտարարած էր, որ իրական պետութիւնը վերջ պիտի տայ ինքնապաշտպանութեան քաղաքականութեան, որպէսզի կարենայ պատշաճ միջոցներով հակադարձել պաղեստինեան ըմբոստութեան եւ պայն ճնշել:

Միւս կողմէ, իսրայէլեան ոստիկանայինը հաղորդեց, որ վարչապետ Արիէլ Շարոն մերժած է եզրիտական – յորդանանեան ծրագիր մը, որ կ'առաջարկէ վերահաստատել ապահովական հարցերու գծով գործակցութիւնը պաղեստինցիներուն հետ, իսրայէլեան ուժերը հեռացնել Կապալի եւ Այլորդիանի կարգ մը շրջաններէն, ինչպէս նաեւ վերականգնել իսրայէլեան բանակցութիւններուն: Շարոնի մօտիկ աղբիւրներ ըսին, որ վարչապետը առաջարկը մերժած է, որովհետեւ պայն ճնշումի միջոց մը կը նկատէ իսրայէլը բանակցութեան սեղան վերադարձը: Նշելու բռնարարքներու ճամբով: Շարոն կը պնդէ, որ բանակցութիւններու պիտի չվերակախ այնքան ատեն որ բախումներն ու պաղեստինեան ըմբոստութիւնը չեն դադրած:

Հեպրոնի մէջ երէկ իրեայ բնակիչներ թաղման արարողութիւնը կատարեցին տասնամեայ աղջնակին, որ անցեալ շաբաթ սպանուած էր արձակազէնի մը փամփուշտով: Հրեաները կ'ըսեն, որ արձակազէնը պաղեստինցի էր: Յուդարկարութեան մասնակցած աւելի քան հազար իրեաներ պահանջեցին, որ Շարոնի կառավարութիւնը լուծէ վրէժը երեխային սպանութեան: Հրեաները կը պնդեն, որ իսրայէլի կառավարութեան պարտականութիւնն է լուծել վրէժը իր սպանուած զաւակներուն: Ականատեսներ ըսին, որ յուղարկարարութեան ընթացքին իրեաները քարեր նետած են պաղեստին-

ցիներուն վրայ: Բնակեցման վայրերու կառուցման ջատագով իրեայ երեսփոխան մը Իցիաք Լեւի դիտել տուաւ, որ փոքրիկ աղջնակին սպանութիւնը կը պահանջէ, որ կառավարութիւնը կամ պարպէ բնակեցման վայրերը, կամ այ ամրապնդէ անոնց պաշտպանութիւնը: Հեպրոնի 120 հազար արաբ բնակչութեան կողքին կ'ապրին շուրջ չորս հարիւր իրեաներ: Լեւի շեշտեց, որ վարչապետը շուտով որոշում մը պէտք է տայ այս հարցին մասին, որպէսզի իրեաները պաղեստինեան փամփուշտներուն թիրախ չդառնան:

Կապալի մէջ պաղեստինեան ապահովութեան ուժերու հրամանատար Մոհամէտ Տահլան դատապարտեց պաղեստինեան ուժերէն վեց հոգիի ձերբակալութիւնը, դիտել տալով, որ անիկա աւելի կը սրէ յարուածութիւնը շրջանին մէջ: Տահլան պահանջեց, որ իսրայէլ անմիջապէս ազատ արձակէ ձերբակալուածները:

ԱՐԱՅԱԹ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՇԱՐՈՒՄՆԵՐՈՒ ԴԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ՇԵՏ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ այս ամսուան ընթացքին Սուրիա պիտի այցելէ, տեսակցութիւն ունենալու համար պաղեստինեան արմատական շարժումներու ղեկավարներու հետ, որոնք դէմ են Իսրայէլի հետ խաղաղութեան:

Պաղեստինեան աղբիւրներ հաղորդեցին, որ ՊԱԿի քաղաքական հարցերու պատասխանատու Ֆարուք Քատտուի շաբաթավերջին Սուրիա այցելած է, ուր տեսակցութիւն ունեցած է իշխող ղեկավարներուն հետ, նախապատրաստելու համար Արաֆատի հետ հանդիպումը: Քատտուի տեսակցութիւններ ունեցած է Նալէֆ Հաուաթմէի եւ Ահմէտ Օիպրիի հետ: Հաուաթմէ ըսաւ, որ ուրախ է Արաֆատի եւ Սուրիոյ միջեւ գոյացած հաշտութեան համար:

ՄՊԻՏԱԿ ՏՆԵ ՄԷՋ

ՄՈՒՊԱՐԱՔ ԱՅՍՕՐ ԿԸ ՏԵՍԱԿՅԻ ՊՈՒՇԻ ՀԵՏ

Եզրիտոսի նախագահ Հիւսնի Մուպարաք կոչ ուղղեց Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշի եւ անոր կառավարութեան, որ աւելի գործունէ երակատարութիւն ստանան Միջին Արեւելքի մէջ եւ աշխատի փարատելու համար տարակարծութիւնները պաղեստինցիներուն ու իսրայէլի միջեւ:

Մուպարաք, որ այսօր տեսակցութիւն պիտի ունենայ Պուշի հետ, դիտել տուաւ, որ Միջին Արեւելքի մէջ կացութիւնը չափապահ վտանգաւոր է, որուն համար կարիքը կը վզացուի ամերիկեան միջամտութեան: Խօսելով պաղեստինեան ըմբոստութեան մասին, Մուպարաք ըսաւ, որ Արաֆատ կրնայ որոշ շրջաններու վրայ հակակշիռը բանեցնել, սակայն ան չի կրնար պաղեստինցիներէն պահանջել, որ վերջ տան ըմբոստութեան, երբ օրական մարդիկ կը սպաննուին իսրայէլեան ուժերուն կողմէ:

Եզրիտոսի արտաքին գործոց նախարար Այր Մուսա իր կարգին ըսաւ, որ Միջին Արեւելքի մէջ վայրագութեան այիքը մեղմացնելու լաւագոյն ձեւը խաղաղութեան բանակցութիւններ առաջարկելն է պաղեստինցիներուն, սակայն ձըրձուած ժամանակամիջոցի մը մէջ: Մուսա, որ վստահ է թէ Պուշ շուտով պիտի վերստանան ամերիկեան գործօն դերակատարութիւն մը շրջանին մէջ:

Մուսա անդրդունելի նկատեց Շարոնի այն կեցուածքը, որ Արաֆատէն կը պահանջէ նախ վերջ տալ ըմբոստութեան, ապա՝ խաղաղութեան բանակցութիւններուն վերակախ:

(ՌՅԹԸԸ)

ՈՒՆՏԱԿԱՆ ԱՅՑՈՒԹԵԱՆ ԹՎՓՕՐ ԴԵՊԻ ԱՆԹԻԼԻԱՍ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՕՐՈՒԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին եւ Կիլիկիոյ Կթորդի կոնստութան Ուխտի Օրուան առիթով Կիրակի, 1 Ապրիլի առաւօտուն տեղի ունեցաւ Ուխտի Թափօր մը: Առաւօտեան ժամը 7:30ին Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցիէն Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեանի գլխաւորութեամբ ճամբայ ելած թափօրը, Տորայի, Նահիր Էլ Մոքի եւ Ժէլ Էլ Տիպի մայրուղիներէն անցնելով, ուղղուեցաւ դէպի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայրավանքը:



Արամ Ա. Վեհափառ՝ պատգամի պահուն Լուսակարները՝ Պ. Զարուկեանի եւ Բ. Պերպերեանի

Շաբ-ը՝ էջ 3

ՖԼՈՐԻՏԱՅԻ ՄԷՋ

ՎԱՂԸ՝ ՔՈԶԱՐԵԱՆ - ԱԼԻԵԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի եւ Արարչի նախագահներ Ռոպէրթ Քոչարեան եւ Հայտար Ալիե վաղը Քի Ռեյսի մէջ (Ֆլորիտա, Մ. Նահանգներ) պիտի գումարեն իրենց 17րդ հանդիպումը Լեոնալի Ղարաբաղի հակամարտութեան լուծման ուղղութեամբ իրենց ուղղակի երկխօսութեան ծիրին մէջ:

Հանդիպումը կազմակերպուած է Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոչի Փաուլի նախաձեռնութեամբ: Հանդիպումին պիտի մասնակցին ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախագահները, ինչպէս նաեւ շուրջ հարիւր դիւանագետներ: Նախագահներու վերջին հանդիպումները տեղի ունեցած էին 26-27 Յունուարին եւ 4-5 Մարտին Փարիզի մէջ՝ Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի նախաձեռնութեամբ:

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբեր մը Ուրբաթ օր լրագրողներուն ըսաւ, որ ամերիկեան վարչակազմը կը յուսայ, թէ երկու կողմերը պիտի կարենան նուազեցնել տարակարծութիւնները: Ան մտահոգութիւն յայտնեց, որ Հայաստանի եւ Արարչի միջեւ կոչուներու վերսկսումը կրնայ աւելի ընդլայնուած պատերազմի մը պատճառ դառնալ, որուն մէջ հաւանաբար կրնան ներգրաւուիլ իրան, Թուրքիա եւ Ռուսիա:

Միւս կողմէ, Մ. Նահանգներ մեկնելէ առաջ Ալիե ըսաւ, որ «լսած եմ Մինսքի խմբակի համանախագահութեան տեսակէտը, թէ հակամարտող կողմերը աւելի քան երբեք մօտեցած են խաղաղութեան: Կը կարծեմ, որ այս լաւ-

տես յայտարարութիւններուն համար հիմքեր կան»:

Ալիե ըսաւ, որ որեւէ լուծում պէտք է գործադրուի բազմաթիւ հանգրուաններու ընթացքին եւ հերքեց այն լուրերը, թէ ինք եւ նախագահ Քոչարեան Ֆլորիտայի մէջ պիտի կնքեն համաձայնագիր մը: «Եթէ խաղաղութեան հասնինք, ապա մենք կրնանք համաձայնագիր մը կնքել, որ պիտի ստորագրուի նաեւ աշխարհի մեծ ուժերուն, ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախագահներուն, Եւրոպական Միութեան եւ ՄԱԿի կողմէ», ըսաւ ան: Ալիե ըսաւ, որ Արարչի ճան եւ Հայաստան պէտք է համաձայնակցութիւններու մասին, ապա բազմաթիւ հարցեր կան, որոնք պիտի լուծուին, որպէսզի խաղաղութեան հասնինք:

ԹՐՔԱԿԱՆ ՕԴԱՆԱԻԵՐ ՊԻՏԻ ՕԳՏԱԳՈՐԾԵՆ ՄԱՆՆԵՈՒԼԻ ԽԱՐԻՍԵԸ

Թուրքիոյ եւ Վրաստանի միջեւ պիտուրական գործակցութեան մասին կնքուած համաձայնագիրին շրջագիծին մէջ թրքական օդանաւեր պիտի կարենան օգտագործել Վրաստանի Մառնեուլի խաբիւրը, կը հաղորդէ «Անտոյոյ» լրատու գործակալութիւնը: Ըստ համաձայնագիրին՝ թուրք պիտուրները եւս պիտի կարենան հաստատուիլ այդ խաբիւրին մէջ: «Ինթըրֆաքս» գործակալութեան համաձայն՝ Թուրքիա 1 միլիարտ տոլար պիտի յատկացնէ խաբիւրին արդիականացման համար:

Վուլիպատէ: Արարչի նախագահի նախկին խորհրդական Վաֆա Կուլիպատէի համաձայն՝ այս որոշումը դրական ազդեցութիւն պիտի ունենայ շրջանի աշխարհաքաղաքական իրավիճակին վրայ: Ըստ անոր՝ այս որոշումը պիտի առաջնորդէ շրջանի կայունութեան, որովհետեւ ներկայիս շրջանը կը գտնուի Ռուսիոյ հակակշիռի տակ: «Ներկայիս Ռուսիա կը գլխաւորէ շրջանի երկու հակամարտութիւնները՝ Աբխազիոյ եւ Լեոնալի Ղարաբաղի: Թուրքիոյ այս ներկայութիւնը յատկանշական է նաեւ Արարչի նախագահի համար: Մենք եւս պիտի օգտուինք Վրաստանի կայունութեան», նշեց

«Մուսաւթ» կուսակցութեան առաջնորդի խորհրդական Ղապիլ Հուսէյնի ի համաձայն Կովկասի աշխարհաքաղաքական իրավիճակը փոխուած է եւ ՕԹԱՆԻ եւ արեւմտեան պետութիւններու կշիռը շրջանին մէջ բարձրացած է: Ան ըսաւ, որ Վրաստան կը փորձէ իր բանակը ՕԹԱՆԻ չափանիշներուն

Շաբ-ը՝ էջ 10

ՄԵԾԱՄՕՐԻ ԿԱՅԱՆԸ ԿՐՆԱՅ ԲԱՆԻԼ ՄԻՆՉԵԻ 2017

Հայաստանի կորիզային կայանի ընդհանուր տնօրէն Սուրէն Ավատեան ըսաւ, որ Կորիզային ուժանիւթի միջազգային գործակալութեան (Այ. Էյ. Ի. Էյ.) պատնիքակութիւն մը այս տարեվերջին պիտի քննէ Հայաստանի կորիզային կայանի ապահովութիւնը:

«Մնարք» լրատու գործակալութեան հետ հարցազրոյցի մը ընթացքին Ավատեան ըսաւ, որ ներկայիս կայանի ապահովութեան բարձրացման աշխատանքներու 95 առ հարիւրին ծախսերը կը հոգան միջազգային կազմակերպութիւնները: Այս առումով յառաջիկայ վեց տարիներու համար Եւրոպական Միութիւնը տարեկան 10 միլիոն եւրօ պիտի յատկացնէ, իսկ Մ. Նահանգներու ուժանիւթի նախարարութիւնը պիտի տրամադրէ շուրջ 18 միլիոն տոլար:

Ավատեան ըսաւ, որ վերջերս Մ. Նահանգներու ուժանիւթի նախարարութեան ներկայացուցիչներ այցելեցին Մեծամորի կորիզային կայան եւ գնահատեցին ցարդ կատարուած աշխատանքը: Ան ըսաւ, որ կայանը կ'ապահովէ Հայաստանի էլեկտրականութեան 40 առ հարիւրը: Անդրադառնալով Եւրոպական Միութեան այն պահանջին, որ կայանի գործունէութիւնը դադարի 2004ին, Ավատեան ըսաւ, որ Հայաստանի կորիզային կայանը պիտի աշխատի այնքան ատեն, որ հնարաւոր է: Ան ըսաւ, որ կայանին կեանքը 30 տարի նախատեսուած է եւ հետեւաբար անիկա կրնայ բանի մինչեւ 2017:

Advertisement for UPS and LIBANPOST. Includes the UPS logo and text: 'Also Available in all', 'Worldwide Express', 'LIBANPOST ԼԻԲԱՆՍՏԻՆ', 'Post Offices', 'Phone & Fax: (01) 218 575'.

ՊԱՊԸ ԲԱՅՕԹԵԱՅ ՊԱՏԱՐԱԳ ՊԻՏԻ ՄԱՏՈՒՅԷ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

Յովհաննէս Պօղոս Բ. պապը բացօթեայ պատարագ մը պիտի մատուցէ Դամասկոսի Աբբասեաններ մարպաղաշտի վրայ, Մայիսի այցելութեան ընթացքին, յայտնեց կաթողիկէ եպիսկոպոս Իպոսը Պաթրիարքի:

Պապը Սուրիա պիտի այցելէ Մայիս 5-8: Պաթրիարքը ըսաւ նաեւ, որ պապը պիտի այցելէ Դամասկոսի Օմայեաններու մկկիթը, ուր իսլամ կրօնաւորներու հետ միացեալ աղերասնք մը եւ ոչ թէ աղօթք մը պիտի ուղղեն Աստուծոյ խնդրելով, որ նախագահին երկար կեանք տրուի, հիւանդներու ապաքինում եւ հաւատքի ամրապնդում ժողովուրդին մէջ: Նախագիտ յայտարարուած էր, որ միացեալ աղօթք մը պիտի կատարուի, սակայն պահպանողական իսլամներու բողոքին դիմաց, ծրագիրը փոփոխութեան ենթարկուեցաւ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՍԵՆՏԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ – ԻՐԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

ՏՈՒՊԱՅ, 1 (ՌՈՅԹԸՐԸ).– Սենտական Արաբիոյ ներքին գործոց նախարար Նայեֆ իշխանը Կիրակի օր յայտնեց, որ Իրանի հետ ապահովական մարպի համաձայնագիր մը պիտի ստորագրէ Ապրիլ 15ին, երբ իսլամական հանրապետութիւն այցելէ:

Յիշեալ համաձայնագիրը պիտի ստորագրուի Փետրուարին: Կարգ մը աղբիւրներ յետաձգումը վերագրած են տարակարծութիւններու: Իշխանը ըսաւ սակայն, որ տարակարծութիւններ չկան: Ան աւելցուց, որ երկու երկիրներուն միջեւ համաձայնութիւն գոյացած է ապահովական տարապի մը շուրջ եւ թէ կապերը լաւ պիտի ըլլան:

Սենտական Արաբիա կ'ըսէ, որ համաձայնագիրին նպատակն է պայքարիլ ռճիրներու, ահաբեկչութեան եւ թմրեցուցիչի մաքսանենգութեան դէմ: Անիկա կը պնդէ, որ համաձայնագիրը շրջանային պաշտպանութեան համաձայնութիւն մը չէ:

ԻՐԱՆ

ԲԱՆՈՒՄ՝ ԶԻՆԵԱԼՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱՅՈՒԹԵԱՆ ՈՒԹԵՐՈՒ ՄԻՋԵՒ

ՏՈՒՊԱՅ, 1 (ՌՈՅԹԸՐԸ).– Իրանի ընդդիմադիր գլխաւոր շարժումը՝ Մուսախանի խաչք Կիրակի օր յայտնեց, որ երէկ զինեալներ սպաննուած են Իրանի ապահովութեան ուժերուն հետ բախումի մը ընթացքին:

Ընդդիմադիր շարժումը աւելցուց, որ բախումին ընթացքին վիրաւորուած են նաեւ տասնեակ մը իրանցի զինուորներ: Բախումը տեղի ունեցած է Իրաքի սահմանին մօտ:

Իրանեան պաշտօնական աղբիւրներ ու լրատու գործակալութիւնները չհաստատեցին բախումներու լուրը:

Միւս կողմէ, Իրան տուն կանչեց Արաբական Միացեալ Էմիրութիւններու մէջ իր դեսպանը, բողոքելու համար վէճի առարկայ երեք կողմերու հանդէպ արաբական երկիրին որդեգրած կեցուածքին դէմ:

Երեք կողմերը Իրանի հակակշիռին տակ կը գտնուին, սակայն Ա. Մ. Էմիրութիւնները կը պնդեն, որ իրենց կը պատկանին եւ թէ Թեհրան պէտք է յանձնէ պանոնք:

Իրանի արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց, որ դեսպանը Թեհրան կանչուած է անցելու Հինգշաբթի օր, իբրեւ բողոք Ա. Մ. Էմիրութիւններուն կեցուածքին դէմ: Նախարարութեան յայտարարութիւնը կ'ընդգծէ, որ երեք կողմերը անբաժան մէկ մասն են Իրանի:

ՌԻՐԸՆԻՍ

ՆԱԽԱԳԱՅ ԲՈՒՇՄԱՅԻ ՄԵԿ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԸ ԶԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ

Ուրբանացի դատախաչներ շաբաթավերջին յայտնած են, թէ նախագահ Լէոնիտ Քուչմայի քաղաքական մէկ հակառակորդը հիւանդանոցի մը մէջ ձերբակալուած է:

Եւրոպայի Թիմոքէնքո անցեալ Երեքշաբթի օր Քիւրեի անձնական մէկ հիւանդանոցը փոխադրուած է ստամոքսային խոցի մը պատճառով, Փեչեքըք շրջանի մէկ ատեանին այն վճիռէն ետք, թէ որքէն հիմնաւորում չկայ զայն բանտին մէջ պահելու՝ փտածութեան յանցանքով անոր դատարարութեան քաջ:

Սակայն Քիւրեի քաղաքային ատեանը բեկանած է Փեչեքըքի ատեանին վճիռը:

Թիմոքէնքոյի հետեւորդները կ'ըսեն, թէ Քիւրեի ատեանին վճիռը հակասահմանադրական է: Անոնք Երկուշաբթի օր (այսօր) գերագոյն ատեանին պիտի դիմեն, որպէսզի անիկա վերատեսութեան ենթարկէ վճիռը:

Թիմոքէնքո, որ մինչեւ Յունուար փոխ վարչապետ մըն էր եւ պատասխանատու ուժանիւթի մարպին, կը հերքէ իր դէմ ուղղուած ամբաստանութիւնները, յայտնելով, որ անոնք կը նպատակադրեն վերջ տալ այդ ճարտարարուեստը բարեկարգելու իր ճիգերուն, որոնք Քուչմայի հետ սերտ կապեր ունեցող ուժեղ գործարարներու կը վնասեն:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԹՈՒՐԻՒԼ

ԲՈՂՈՔԻ ՄԵԾ ՅՈՅՅԵՐ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ԴԷՄ

Թուրքիոյ տարածքին հապարտոր ցուցարարներ Շաբաթ օր բողոքած են տնտեսական բարեկարգումներու դէմ, որոնք Դրամական Միջազգային Ֆոնտին պօրակցութիւնը կը վայելեն:

Անոնք հաւաքուած են յատկապէս Անգարայի եւ Պոլսոյ մէջ՝ մեծ թիւով ոստիկաններու ներկայութեան:

Բողոքները տեղի կ'ունենային մինչ կառավարութիւնը կը տեսակցէր սենտիքաներու դեկավարներու եւ գործատէրերու հետ տնտեսական նոր ծրագիրի մը հանդէպ հանրութեան պօրակցութիւնը ապահովելու առաջադրութեամբ:

Վարչապետ Պիլիքէն Էճեօլ, միասնականութեան կոչ ուղղելով, յայտարարած է, թէ ծրագիրին նպատակն է արագացնել տնտեսական աճը:

ՌՈՒՍԻԱ

ՅՈՒՅԱՐԱՐՆԵՐ ԶՕՐԱՎԻԳ ԿԸ ԿԱՆԳՆԻՆ «ԷՆ. ԹԻ. ՎԻ.» ԿԱՅԱՆԻՆ

Ռուսիոյ մէջ հապարտոր ցուցարարներ Շաբաթ օր Մոսկուայի մէկ հրապարակին վրայ հաւաքուած են՝ պաշտպանելու համար երկրին պատկերասփիւռի անկախ միակ կայանը՝ «պաշտօնական յարձակողականներէ»:

Ականաւոր ապատականներ Փուշքին հրապարակին վրայ հաւաքուած աւելի քան 10 հազար ցուցարարներուն յայտնած են, թէ «ԷՆ. ԹԻ. ՎԻ.» կայանը փակուելու վտանգին տակ կը գտնուի:

Հաւաքը Մոսկուայի մէջ տարիներէ ի վեր կայացած ցոյցերուն մեծագոյնն էր:

«ԷՆ. ԹԻ. ՎԻ.»-ի հիմնադիրը՝ գործարար Վլատիմիր Կուսիւսքի, որ ներկայիս Սպանիա կը գտնուի՝ պայքարելով զինք Ռուսիոյ արտաշանմելու քայլերուն դէմ, կը փորձէ կասեցնել պետական կապի կապիտալիստի ընկերութեան կողմէ «ԷՆ. ԹԻ. ՎԻ.»-ն ձեռք ձգելու քայլերը:

Ապատականները բանավեճը եւ «ԷՆ. ԹԻ. ՎԻ.»-ի դէմ առնուած օրինական քայլերը քննութիւն մը կը նկատեն Փուշքինի՝ մամուլայապատուութեան եւ արդար թղթակցութեան հարցերուն հանդէպ յանձնառութեան:

Ետպիտք Կուսակցութեան դեկավարը՝ Կրիկորի Եւլիիսքի, յայտնած է, «Գիտենք, թէ ինչու կ'ուզենք քանդել «ԷՆ. ԹԻ. ՎԻ.»-ն: Որպէսզի բնաւ տեղեակ չըլլանք երկրէն դուրս հանուող միլիոնաւոր տոյարներու մասին կամ թէ ի՞նչպէս պատերազմ մը կը մղուի՝ ահաբեկչութեան եւ փտածութեան դէմ պայքարի նշանախօսքերով»:

«Գիտենք, թէ սահիկա ահաբեկչներու եւ փտածութեան դէմ պայքարի չի վերաբերիր, այլ սահիկա լրատու աղբիւրներու ապատուութեան կը վերաբերի», շեշտած է

րած է, թէ ծրագիրին ծախսերը պէտք է բաժնեկցին ընկերութեան բոլոր հատուածները՝ արդար եւ հաւասարակշռուած ձեւով մը:

Տնտեսութեան նախարար Քեմալ Տերվիշ մշակելու ընթացքի մէջ է կառուցային մեծ բարեկարգումներու ծրագիրը, որ ըստ անոր՝ մեծ թիւով ոստիկաններու ներկայութեան տնտեսական նոր ծրագիրի մը հանդէպ հանրութեան պօրակցութիւնը ապահովելու առաջադրութեամբ:

Սենտիքաներ անոր առաջարկները քննադատած են:

Երկրին մեծագոյն սենտիքային «Թուրք-Իշ»-ի նախագահը՝ Պայրամ Մերալ, յայտնած է, թէ Գ. Մ. Ֆոնտին եւ Համաշխարհային Դրամատան քա-

ղաքականութիւնները չեն նպատակադրեր թուրքիոյ օժանդակել, «այլ ապահովել, թէ թուրքիա պիտի կարենայ իր պարտքերը անհրաժեշտ ժամանակին եւ լիովին հատուցել»:

Գլխաւոր սենտիքաները յայտնած են, թէ Գ. Մ. Ֆոնտին պօրակցութիւնը վայելող տնտեսական ծրագիրը՝ ֆոնտին սկզբունքներուն վրայ հիմնուած, անընդունելի պիտի ըլլայ եւ թէ բողոքները եւ գործադուլները անոր պատասխանը պիտի ըլլան:

Անոնք ամսականներու յաւելում կը պահանջեն, համաձայն սղաճի բարձր համեմատութիւններուն:

(ՌՈՅԹԸՐԸ)

ան: «ԷՆ. ԹԻ. ՎԻ.» յաճախ քննադատած է Կրեմլինի քաղաքականութիւնը, յատկապէս՝ Չեչենիոյ դէմ Ռուսիոյ զինուորական շարժանները: Անիկա նախագահ

Վլատիմիր Փուշքինը ամբաստանած է հապի մէկ տարուան իր պաշտօնավարութեան ընթացքին անհատական ապատուութիւնները սահմանափակելու յանցանքով:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՌՈՒՍԻՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐԸ ԶՕՐԱՎԻԳ ԿԸ ԿԱՆԳՆԻ «ՀԱՒԱՍԱՐԱՎՇՈՒՄԸ» ԲԱՆԱԿԻ ՄԸ

Ռուսիոյ պաշտպանութեան նոր նախարարը՝ Սերգէյ Իվանով շաբաթավերջին յայտնած է, թէ պօրավիգ կը կանգնի «հաւասարակշռուած» բանակի մը, ուր երկրին կորիպային հրթիռներու վախանը կը պահպանուի, սակայն ուր աւանդական ուժերը բարեկարգուած եւ բարելաւուած ըլլան:

Իվանով, որ անցեալ շաբաթ նախագահ Վլատիմիր Փուշքինի կողմէ նախարար նշանակուած էր, հարցազրոյցի մը ընթացքին յայտնած է, թէ կ'ուզէ վերջ տալ պարտադիր զինուորագրութեան, սակայն ան ըսած է նաեւ, որ սահիկա ժամանակի կը կարօտի:

«Ամէն ինչ հաւասարակշռուած պէտք է ըլլայ», ըսած է ան:

«Օրինակ, ռազմավարական հրթիռներու ուժերը, սահիկա երկրին կորիպային վախանն է: Անիկա վստահելի պատնէշ մըն է Ռուսիոյ վրայ կորիպային զենքերով յարձակումի մը դէմ, դիտել տուած է ան:

Ան աւելցուցած է, որ միաժամանակ աշխարհը փոխուելու ընթացքին մէջ կը գտնուի: «Կան նոր սպառնալիքներ, որոնք 10 տարի առաջ յայտնի չէին», ըսած է Իվանով:

Ան դիտել տուած է, որ Ռուսիա որոշ չափով անտեսած է աւանդական ուժերը, որոնք պէտք է բարեկարգուին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՉԱՍ ԱՌԵՒՏՈՒՐԻ ԳԾՈՎ

ԻՐԱՔ – ՍՈՒՐԻԱ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ԴՐՈՒԵՑԱՒ

Իրաքի եւ Սուրիոյ միջեւ ստորագրուած ապատ առեւտուրի համաձայնագիրը գործադրութեան դրուեցաւ երէկ, յայտնեց իրաքցի բարձրաստիճան պաշտօնատար մը:

Առեւտուրի նախարար Մոհամէտ Մեհտի Սալէի ըսաւ, որ Ապրիլ 15-ն սկսեալ (երէկ), Իրաքի եւ Սուրիոյ միջեւ առեւտուրը մաքսատնային տուրքերէ վերջ պիտի դառնայ:

Իրաք եւ Սուրիա համաձայնագիրը ստորագրած էին Յունուար 31ին: Կը նախատեսուի, որ երկու երկիրներուն միջեւ առեւտուրի փոխանակումը այս տարի հասնի մէկ միլիարտ տոլարի: Անցեալ տարի 500 միլիոն տոլար էր: Իրաք եւ Սուրիա անցեալ տարուրէն ի վեր սկսած են բարելաւել կապերը, որոնք քսան տարի գրեթէ խլուած վիճակի մը մէջ կը գտնուէին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԾՈՎՈՒԹԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԵԿ ՕԴԱՆԱԻՐ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ԷՋԲ ԿԱՏԱՐԱԾ Է ՉԻՆԱՍՏԱՆ

Ամերիկեան ծովուծին պատկանող հսկողութեան օդանաւ մը երէկ ստիպողական էջք կատարած է հարաւային Չինաստանի մէջ՝ թէթեօրէն բախելէ ետք չինական ռազմական օդանաւի մը:

Հայնան կղզիին վրայ պաշտօնատար մը հաստատած է, թէ ամերիկեան օդանաւ մը էջք կատարած է կղզիին վրայ, սակայն ան մերժած է մանրամասնութիւններ տալ:

Ըստ ամերիկեան ծովուծի մէկ հաղորդագրութեան, ամերիկեան օդանաւը հետապնդած է չինական ռազմական 2 օդանաւեր:

Անիկա յայտնած է, թէ հարաւային Չինաստանի ծովու վերեւ հսկողութեան սովորական առաքելութեան մը ընթացքին է, որ օդանաւին դէպքը պատահած է:

Ամերիկեան օդանաւը վնասուած է, սակայն մարդկային վնաս չէ արձանագրուած:

(ՌՈՅԹԸՐԸ)

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ...

Շարունակուած Ա. ԷջԸ

Լիբանանի թեմի եկեղեցիներու դպրաց դասերու կողմէ շարականներու երգեցողութեամբ առաջնորդուած թափօրին մասնակցեցան քահանայ հայրեր, Հ. Մ. Ը. Մ. ի եւ Հ. Բ. Ը. Մ. – Հ. Ե. Ը. ի սկսուած էր, լիբանանահայ վարժարաններու աշակերտներ, ազգային միութիւններու ներկայացուցիչներ եւ հաւատացեալներ:

Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ տեղի ունեցած եկեղեցական



Քայլարշաւէն տեսարան մը



Ս. Պատարագէն խորհրդաւոր պահ մը

արարողութեան ընթացքին պատարագեց առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, եկեղեցական արարողութեան հանդիսապետեց Արամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, որ հաւատացեալներուն ուղղած իր պատգամին մէջ ըսաւ. «Հայ եկեղեցին մեր Ազգի Մեծ Տոնն է, հիմնուած Ս. Թադէոս ու Բարթողոմէոս Առաքեալներու նախատակութեամբ եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի վառ տեսլիքով: Փաստէնք մեր շրջապատին, որ մենք որպէս մէկ ու ամբողջական լիբանանահայութիւն, կառչած կը մնանք մեր եկեղեցւոյ դպրաւոր աւանդութիւններուն ու մեր ժողովուրդի հարուստ մշակոյթին»:

Ս. պատարագէն ետք վեհափառին գլխաւորութեամբ կապմուտեցաւ աշերու եւ կաթողիկոսարանի այլ մասունքներուն թափօրը, որ Մայրավանքի շրջափակին մէջ դառնալէ ետք, կրկին մտաւ Մայր տաճար՝ Խաչահանգիստի արարողութեան համար: Չորօրինէքի ընթացքին վեհափառը Գրիգոր Լուսաւորիչի Աջով օրինեց շուրք, որ բաժուուեցաւ հաւատացեալներուն:

Մինչեւ ուշ երեկոյ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջը մնաց Մայր տաճարին խորանին առջեւ: Նշենք, որ մէկ օր առաջ, Շաբաթ, 31 Մարտին Անթիլիասի Մայր տաճարին մէջ կատարուեցաւ հանդիսութեան նախատօնակը, որուն ընթացքին մատուցուեցաւ Ս. պատարագի տեսլիքին: Նոյն օրը, ուխտաւոր հաւատացեալներուն ուղղելով իր խօսքը, վեհափառը յիշեց, որ Մեծ Սուրբը՝ Գրիգոր Լուսաւորիչը, մեր եկեղեցւոյ մէջ մնալուն կերպով կը յիշատակուի շարականներու, աղօթքներու, մաղթանքներու եւ քարոզչութեան ձամբով:

«ՂԱՐԱԲԱՂԻ ԱՐՈՒԵՍՏՆԵՐ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՇՈՒՇԻԻ ՓԱՌԱՏՈՆԻՆ

Շուշիի «ԼՂ - 2001 արուեստներ եւ երաժշտութիւն» փառատօնին թուականն վեց ամիս առաջ, Փետրուարի եւ Մարտի ընթացքին Լեւոնյանի Ղարաբաղի Արուեստներ կազմակերպութեան հիմնադիր եւ տնօրէն Նալիի Մելքոնեան Սան Տիէկոյի, Լոս Անճելըսի եւ Քալիֆորնիոյ մէջ սկսած է փառատօնին համար դրամահաւաքի մը:

Շուշիի փառատօնին խորհրդանշական բացումը պիտի կատարուի Լեւոնյանի Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման տարեդարձին գուգադիպող շարաթավերջին (30 Օգոստոսէն 2 Սեպտեմբեր):

1999էն ի վեր «ԼՂ - Արուեստներ» կազմակերպութիւնը նուիրատուութիւններու եւ ծառայութիւններու միջոցով կրցած է գոյացնել 125 հազար տոլարի գումար մը:

Լեւոնյանի Ղարաբաղի իշխանութիւնները, իբրեւ պատրաստութիւն փառատօնին, սկսած են Շուշիի մարզի ջուրի եւ երկտրակապութեան ցանցերու նորոգութեան:

Շուշին՝ իբրեւ փառատօնի վայր, ընտրուած է Լեւոնյանի Ղարաբաղի մէջ իր ներկայացուցած պատմական արժէքին համար: Երկու տարին անգամ մը կայացող Շուշիի փառատօնը կը նպատակադրէ գարգացնել Լեւոնյանի Ղարաբաղի եւ միջազգային համայնքին միջեւ մշակութային երկկողմանի յարաբերութիւնները եւ նպաստել շրջանին մէջ տնտեսական կենսունակութեան եւ անհրաժեշտ ենթակառուցչին ստեղծման:

Հիմնադրամիկն, նուիրատուութիւններ հաւաքելու նպատակով «ԼՂ - Արուեստներ» կազմակերպութիւնը յառաջիկայ Մայիսին եւ Յունիսին շրջապատներ պիտի կազմակերպէ Մոնթէպելի, Նիւ Եորքի եւ Լոս Անճելըսի մէջ: Իսկ Ապրիլի ընթացքին փառատօններու կազմակերպիչ մը Ն. Մելքոնեանի ընկերակցութեամբ պիտի մեկնի Ղարաբաղ՝ փառատօնին նախապատրաստական աշխատանքները կատարելու համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ՝ ԽԱՐՔՈՎԻ ՄԷՋ

Ուրբանիոյ խարքով քաղաքի կեդրոնին մէջ հայ համայնքի քանի մը մեծ գործարարներ հսկայական հողամաս մը գնած են, ուր պիտի կառուցեն հայկական եկեղեցի, պանդոկ, մշակոյթի կեդրոն՝ մեծ սրահով եւ քառայրկ անտեսուրի կեդրոն մը: Այստեղ պէտք է վաճառուի միայն հայկական արտադրութիւն:

Վերոյիշեալ համալիրի կառուցման աշխատանքները սկսած են անցեալ տարուան 1 Յունիսին եւ, ըստ ծրագրին պէտք է աւարտին այս տարուան 1 Յունիսին:

ԼԷՅՁԸՐԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

«Էքսիմէլ» լեյզըրային ճառագայթներով վիրաբուժութեան շնորհիւ աշխարհի բազմաթիւ երկրներու մէջ վատ տեսողութիւն ունեցող շատ մարդիկ դադարած են ակնոց գործածելէ: Այս մեթոտով վիրաբուժութիւնները 1-2 ամիս ետք պիտի սկսին կատարուել նաեւ Հայաստանի մէջ:

Այդ նպատակով գերմանական «Էքսքոլյաթ Մետիքէթ» ընկերութեան ձեռք բերուած է եւ առողջապահութեան նախարարութեան ֆրզ վարչութեան հիւանդանոցին մէջ տեղադրուած է սարք մը, որուն միջոցով կիրականացուի վիրաբուժութիւնը: Աստիկմաթ, հեռատեսութիւն, կարճատեսութիւն եւ եղջերաթաղանթի այլ վիրաբուժութիւններ, որոնք Միացեալ Նահանգներու մէջ կ'արժեն 3,5 հազար տոլար (1 աշքը), Ռուսիոյ մէջ՝ 400-600 տոլար, Հայաստանի մէջ պիտի արժեն 250 տոլար:

Սկզբնական շրջանին վիրաբուժութիւնը պիտի կատարեն եւ հայրենի մասնագէտներուն պիտի վերադարձուան գերմանացի բժիշկներ:

Հ.Յ.Գ. ԼԵՄ

«ԱՐԱՐՈ»
ՄԱՍՆԱԳԻՏ

«ԼՐԱՅՐ ԴՓՈՒՔ»
ՄԱՍՆԱԳԻՏ

ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ

Ելոյթ 4 ունենայ յեղափոխական երգերու մեկնաբան՝

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Մասնակցութեամբ՝
ՍԵԴՕ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ
ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱՌՈՒՄԲԻՆ

Զարթոյթ, 7 Ապրիլ 2001, երկուշաբթի 8:30ին,
«Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահի մէջ:
Սակ՝ 10,000 լ.ո.

●Տոմսերը ապահովել՝ Ընամագայինի գրախանութիւն (Պուրճ Ընամուտ, «Ճաղոյնեան» Կեդրոն), տիպոգրֆ GEKAT, Մաեւ հեռ. 03 - 953494 թիւին եւ Ելոյթի օրը կրէն:

«ԱՇԹԱՐ» ԵՐՐԵԱԿԻՆ ՅԱԶՈՂ ԵԼՈՅԹԸ



Թիմի Սելեւ, Ժոլք Չիլիքի եւ Իգապի Գայայեան

Վերադարձուածը եւ լաւագոյն խորացուած ու համադրուած մարտիական մեկնարանները:

Ապա հնչեց Փոլ Ժան-Ժանի «Վիեննական Քարտիստ»-ը «Թեմա եւ տարբերակումներ»-ուն յատկապէս աւագասրինգի համար մշակուած տարբերակը: Պէտք է ըսել, որ նուրբ արհեստավարութիւն ենթադրող այս երկին կատարուածը թեքմիք

դ ժողովրդային կարողութիւններ կը պահանջէ, նուազարանի ամբողջ ձայնածաւալի խրթին ու արագաթուրէն օգտագործմամբ յատկանիշ մը, որ անսասնաբար էր ցուցադրեց Ժոլք Չիլիքի Իգապի Գայայեանի նոյնպէս անսասնաբար մատուցմամբ: Համերգին աւարտին «Աշոթար» նուագեց նաեւ կոմիտաս - Ալամազեանի մանրանուագներէն «Հարբան»-ը:

«Աշոթար» երրեակի յաջող երեւումը անգամ մը եւս առիթ տուաւ ընդգծելու սենեկային երաժշտութեան տարածումը աշխուժացնելու անհրաժեշտութիւնը: Որքան լաւ ու շահեկան պիտի լլայ յաճախ լսել շեփոյի (թրոմփէթ), բարձրասրինգի (օպուս), թաւափողի (ֆալկոն), գալարափողի (հորն) եւ այլ նուազարաններու համերգներ, որոնք նոյնպէս անպայմանօրէն մեծ հետաքրքրութիւն պիտի ստեղծեն, ու համայնքը վայելեն նոր աշակերտներու կողմէ ընտրուելով իբրեւ սիրելի նուագարան:

ՔՐԻՍԹԻԱՆ ՏԵՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի 29 Մարտի հրամանագրով Քրիսթիան Տէր Ստեփանեան Եւրոպական Խորհուրդին մէջ Հայաստանի մնացուած ներկայացուցիչ նշանակուած է՝ ազատ կացուցուելով Եւրոպական Խորհուրդին մէջ Հայաստանի ներկայացուցիչ պարտականութիւններէն:

Նախագահ Քոչարեանի նոյն օրուան մէկ այլ հրամանագրով Քրիսթիան Տէր Ստեփանեանի շնորհուած է արտակարգ եւ լիազօր դեսպանի դիւանագիտական աստիճան:

Նոյն օրը, նախագահ Ռ. Քոչարեան, այլ հրամանագրով մը Շէնգենի շրջանի գաղտնիակ Հրաչեայ Բաղալեանը Երեւանի գաղտնիակ նշանակեց:

ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

«Մարտի» այս թիւով տեսնել՝

- Խմբագրական - Մայիսի սկզբունքներ
- Ամրապնդեալ բարոյական արժէքները (Գ.) - Յարութ Զէքիճեան
- Ողջոյնի խօսքեր՝ Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի 65ամեակին առիթով
- Յուշերու պատարիկներ՝ Պ. Համուտի Հ.Մ.Ը.Մ.ի կեանքէն - յետ մահու իրատարակուած յուշեր
- Յուշերու յիշատակներ Յարութիւնեանէն
- Վերլուծելով անցեալը, համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջին մարտիական
- Հայկական կոմիսարտի հիւանդ վայտիմիր Ենգիպարեան - Խ. Մուրադեան
- «Ֆորմիլա 1»-ի մրցաշարքերուն մնացուած հարցումը. «Ֆեռարի»-թէ՞ «Մաքարըն»... - Գ. Թորոյեան

Թիւր 4՝ ընդգրկէ նաեւ հայրենի մարտիական, ինքնուրուի, սկստական եւ մանկապատանեկան բաժիններ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքի անդրադարձներ: 40 գումար է էջեր: Սակ՝ 3000 լ.ո.:

Ստանալու համար դիմել «Մարտի»-ի ցրուիչ Յակոբ Գարակոչեանին, Պուրճ Համուտի գրախանութիւնը եւ Supermarket Master Mall: Անթիլիասի մէջ «Մարտի» կը վաճառուի «Իտէլա», «Obelix» գրախանութիւններուն մօտ:

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏ՝ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԷՋ

Ս. Էջմիածնի մամուլի դիւանը կը հաղորդէ, թէ Չորեքշաբթի, 28 Մարտին, Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսին նախագահութեամբ, բացուած կատարուած է Գերագոյն հոգեւոր խորհուրդի եւ օրհանդէսին, որուն ընթացքին ներկայացուած է կաթողիկոսութեան վերջին ութ ամիսներու գործունէութեան գեկուցումը:

29 Մարտին ժողովականներուն ներկայացուած է 21-23 Սեպտեմբերին կայանալիք 1700ամեակին նուիրուած գլխաւոր հանդիսութիւններուն ծրագիրը: 22 Սեպտեմբերին Էջմիածնի մէջ պիտի կատարուի միւլտիմեդիա եւ քոյր եկեղեցիներու հոգեւորականներու մասնակցութեամբ տեղի պիտի ունենայ Երվանդի թարգմանչութիւնը: 23 Սեպտեմբերին պիտի օժտուի Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Ս. Սեդակը, որմէ ետք հոն առաջին պատարագը պիտի մատուցուի:

1700ամեակի յորեկանական ձեռնարկներուն կ'ակնկալուի Յովհաննէս Պողոս Բ. պապին եւ Պոլսոյ Տիեզերական պատրիարք Բարթողոմէոս Ա.-ի մասնակցութիւնը: 1700ամեակի գլխաւոր հանդիսութիւններէն մէկն է նաեւ 24 Ապրիլին գոյգ վեհափառներուն եւ նախագահ Քոչարեանի Տէր Զօր ուխտագնացութիւնը:

Հայ եկեղեցւոյ կանոնադրութեան զծով ժողովը որոշած է մինչեւ 1 Յունիս ընդունիլ համապատասխան առաջարկներ եւ վերատեսութեան ենթակել գանոնք գերագոյն հոգեւոր խորհուրդի նիստին եւ այնուհետեւ վերջնականօրէն վաւերացնել կանոնադրութիւնը: Նիստին ընթացքին քննարկուած են նաեւ Գարեգին Բ. վեհափառի Միացեալ Նահանգներ եւ Քանադա այցելութեան կազմուած շարքերը:

Գերագոյն հոգեւոր խորհուրդի գոյգ ատենապետներուն՝ Երուսաղէմի հայոց պատրիարք Թորոյեան արք. Մանուկեանի եւ Պոլսոյ հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մուսթաֆեանի բացակայութեան պատճառով նիստին ատենապետներէն էին խորհուրդի աւագ անդամներ Վաչէ արք. Յովսէփեան եւ Գրիտ արք. Նազազեան: Նիստի աւարտէն ետք վեհարանին մէջ տեղի ունեցաւ Գերագոյն հոգեւոր ճեմարանի ամառվերջի հանդէսը, որուն մասնակցեցան նաեւ ժողովականները:

«ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ»Ի ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Վերջերս Պոլսոյ հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մուսթաֆեանի պատուէրով եւ յառաջաբանով լոյս տեսած է Ս. պատարագի աշխարհաբար թարգմանութիւնը տորթ. Վարդ Շիլահերի կողմէ: «Պատարագամատոյց»ը կ'ընդգրկէ Ս. պատարագի բոլոր արթիքներուն աշխարհաբարները: Գիրքին խմբագիրն է Վարդաշակ սրկ. Սերովբեան:

ՊՈՒՍ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է ՍԱՐՈՅԵԱՆԻ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐՈՒՆ ԹՐՔԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Պոլսոյ «Արաս» հրատարակչատունը լոյս տեսած է Ուիլիամ Սարոյեանի պատմուածքներու հատընտիրին թրքերէն թարգմանութիւնը: «Վախկոտները քաջ են» խորագրեալ գիրքը թարգմանուած է Յովհաննէս Գր. Լըւտաղի կողմէ:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՆՈՐ ՓՈՂՈՅ ՊԻՏԻ ԿԱՌՈՒՑՈՒԻ

28 Մարտին Երեւանի գլխաւոր ճարտարապետ Նարեկ Սարգսեան լրագրողներուն յայտնեց, թէ Երեւանի մէջ պիտի սկսին նոր փողոցի մը շինարարութեան աշխատանքները: Ան նշեց, թէ փողոցը պիտի օգտագործուի վեց ամիս ետք:

Երեւանի գլխաւոր յատակագիծին համաձայն, այս փողոցին մէջ երթեկեկութիւնը միակողմանի պիտի ըլլայ եւ պիտի երկարի Պէյրութի փողոցին գուգահեռ միացնելով Միասնիկեան եւ Շահումեան հրապարակները: Ըստ գլխաւոր ճարտարապետին, շինարարութեան համար տարածքը պիտի օգտագործուի լաւագոյն ձեւով եւ պիտի կտրուին 26 կոմիսարներու անունայ գիւղի ընդամէնը 10 - 11 անրթէք ծառերը:

Այս փողոցին շինարարութիւնը, նախնական հաշիւներով, կ'արժէ 141 միլիոն 230 հազար դրամ, որ պիտի հայթայթէ «Ռեկո» իտալական ընկերութիւնը: Երեւանը ներկայիս ունի մօտ 180 փողոց:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Երջանային Վարչութեան կազմակերպած վիճակահանութեան բախտաւոր պիտի որոշուի Լիբանանի ազգային վիճակահանութեան մեծ պարգեւը շահած թիւը՝ 19 Ապրիլ 2001ին:

Այս առիթով, Երջանային Վարչութեան կը ցաւի, որ շահուելիք մեծ պարգեւը պիտի ըլլայ միայն «43» Toshiba հեռախօսի մը, որովհետեւ տոմսերու վաճառքը չտուաւ սպասուած արդիւնքը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ
ԵՐԶԱՆՅՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵՌՔԵՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Լրացաւ երեք տարին այն օրից, երբ Հայաստանի Հանրապետութիւնում տեղի ունեցան նախագահական արտահերթ առաջին ընտրութիւնները: Դրա անհրաժեշտութիւնը ծագեց, երբ արտաքուստ քաղաքական անսպասելի յայտարարութեց նախորդ նախագահի հրաժարականի մասին: Սակայն հարկ է նշել, որ այդ հրաժարականը վաղուց էր հասունանում եւ խոր արմատներ ունէր: Կառավարող քաղաքական ուժը, պետութեան առաջին զէմքի գլխավորութեամբ, քայլ առ քայլ նախապատաստում էր Արցախի ու ազատագրութեան հողերի վերադարձը Պաքոստան, ինչը դիտուում էր ռազմավարական քայլ՝ սեփական իշխանութիւնը հնարաւորին տեւական դարձնելու համար: Նման անհեռատես քաղաքականութեամբ որ միայն Հայաստանը կը յայտնուէր «թուրքական պարկի» մէջ, այլեւ մեծ վնաս կը հասցունէր շրջանում մշտական շահեր ունեցող երկրներին, որոնք դերակատար էին արցախեան ազգային ազատագրական պայքարում: Հանդիպելով անգլիում ընդդիմութեան անգլիում ընդդիմութեանը, կորցնելով շահագործիչ երկրների բարոյաքաղաքական աջակցութիւնը՝ օրուական նախագահը ստիպուած հրաժարական տուեց: Իշխանութեան գայլով արցախեան ալիքի վրայ՝ նա փորձեց այդ իշխանութիւնը պահել նոյն ալիքի մարման գնով: Դա, ի հարկէ, չյաջողուեց ու չէր էլ կարող յաջողուել: Նահանջի գիւրջապատեց բարձր էր, քան իշխանափոխութեանը, եւ տեղի ունեցաւ վերջինս:

Այդ տրամաբխ պահից անցած երեք տարին առանձնապէս մեծ ժամանակ է: Բայց հաշուի առնելով երկրի տնտեսապէս կազմալուծուած վիճակը, ընկերային յարուածութեան աստիճանը՝ ժողովուրդը նոր իշխանութիւններին կենկայում էր շուտափոյթ լուծումներ: Իսկ քաղաքական ընդդիմութիւնն ակնկալում էր հրաժարում պարտուողական արտաքին քաղաքականութիւնից եւ Արցախի լիակատար պաշտպանութիւն:

Անցած ժամանակահատուածը դարձաւ Հայաստանի արտաքին յարաբերութիւնների համակողմանի գարգացման, Արցախի դատի հետապնդման ու Հայոց ցեղասպանութեան ճանաչման կարեւորագոյն հանգրուան: Բանն այն է, որ միջպետական կապերի հաստատումն ու խորացումը աւելի շատ ենթադրուած են քաղաքական կամք ու հետեւողականութիւն, քան՝ Ֆինանսական ներդրումներ: Բացի այդ, նախորդ իշխանութիւնից ժառանգուած քլաններն ու խմբերը այլեւս հնարաւորութիւն չունէին ազդելու արտաքին քաղաքականութեան վրայ: Նրանց հետաքրքրութիւնը սահմանափակուած էր ներքին շահերով: Արտաքին ծախսերում ընդդիմութիւն կարող էր լինել թուրքամէտ ու արեւմտամէտ ՀՀՇՇՇ-ական խմբաւորումը, բայց նա արեւել իշխանութիւն չէր կարող հանդիմանալու իշխանութիւններին յագուրդ տալ անգուսպ քաղաքական մակարդակով:

